

20465

372.5

9-52

1884

2010

2002

003

IS - 52

# ՎԱՅԵԼ ՀԱԴՐՈՒԹԵԱՆ

ԴԱՍԱԿԱՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՆԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՒՄ ԶԵՄՆԱԲԿ

“ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ”  
ԵՆՈՒԽՈՎ, ԳՅՈՒՏԵՑԵՐԸ ԳՈՐԾԵՄՈՂ, ԱԽՍՈՒՅՑ  
ՀԱՄԱՐ.

Ա Ճ Խ Ա Տ Ա Ւ Ի Ւ Ց

Մ. ՏԵՐ-ԱՎՐԳՈՒԵՆՑ

720

28-Sb

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5

1884

372.5  
S-52

# ԱՅՆ ՀԱՅՈՒԹԵՐՆ

## ԴԱՍԱԻՐԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗАЕ

с обозначенного здесь срока

## ԱՐԱՋՆՈՐԴ ԶԵՐՆԱՐԿ

„ԿԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“  
ԱՆՈՒՆՈՎ ԴԱՍՏԵՏՐԸ ԳՈՐԾԱԽՈՂ ՈՒՍՈՒՑԱՑ  
ՀԱՄԱՐ.

213

ԱՇԽԱՏԱԿՐԵՑ

## Մ. ՏԵՐ-ՄԱՐԴՍԵԱՆՑ



ՏՊԱՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԵԼՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԲԵԼԻՆ ՓՈՂՅՑ, 5

1884

36574 ч. 4.

08F  
18-89

ՀԱՅՈՎԱՐԴԻ ԽՈՏԻ

ԹԱՎԱՐԱՐ ՀԱՅՈՎԱՐԴԻ ԽՈՏԻ

ՊԱՐԱԳԱՅԻ ԽՈՏԻ ԽՈՏԻ

ՊԱՐԱԳԱՅԻ ԽՈՏԻ ԽՈՏԻ

ԽՈՏԻ ԽՈՏԻ

ԽՈՏԻ ԽՈՏԻ

Дозволено цензурою, Тифлисъ. 6 Августа 1884 г.  
Типографія И. Мартirosianца. Орбеліан. ул., д. № 5.

## ՎԱՅԵԼ ԶԵԳՐՈՒԹԵԱՆ

### ԴԱՍԱԿԱՆ ԴՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Օտար և մեզանից առաւել առաջնակարգ ազգաց  
մէջ վայելագրութիւնը ունեցել է, ինչպէս և այլ կա-  
րեւոր գիտութիւնները, իւր կանոնաւոր պատմութիւնը,  
որ հետզհետէ զարգանալով՝ հասել է ներկայումս այդ  
ազգաց մէջ իւր կատարելագործութեան աստիճանին  
և շնորհս իւրեանց արիածան մանկալարժների, որք  
յատկապէս մեծ ջանք են նուիրած այդ առարկայի  
դասաւանդութեան կատարելագործութեանը՝ խմբագ-  
րելով նորա համար հիմնական կանոններ համաձայն  
մանկալարժական պահանջմանց: Մեր ազգի մէջ նախ-  
քան տպագրութիւն տարածուելը աւելի միօրինակու-  
թիւն էր իշխում գրութեան ձեւ մէջ՝ քան այժմ. տպագ-  
րութիւնից յետոյ մերայինք շատ քիչ մտածել են գըր-  
շագիր մասը կատարելագործելու և ժողովրդականաց-  
նելու մասին, թէև զանազան անձանց կողմից ժամա-  
նակ առ ժամանակ փորձեր են եղած ժողովրդի ձեռքը  
այլ և այլ ձեռնարկներ տալու, սակայն համարեա նո-  
քա բոլորն էլ, սակաւ բացառութեամբ, ուսուցանելու

Համար ոչ մի հիմնական կանոնի ենթարկուած չեն եղել: Մեզ յայտնի եղած ձեռնարկիների մեծագոյն մասը գլխաւորապէս պարունակում է իւր մէջ զանազան ձեւ ծագկանկար ու փակագիր զարդարուն գլխատառեր, որք միայն իրեւ նկարչութեան օրինակներ գուցէ թէ այէտք գան և ոչ որպէս գրութեան օրինակներ: Այդ այդպէս լինելով՝ մեզանում՝ ՚ի հնուն (նոյն իսկ այժմ էլ շատ տեղեր) դասաւորութեան եղանակը լոկ մեքենական էր: Աւսուցեց ինքնաձեռագիր կամ վիճագիր օրինակներ էր ցըլում աշակերտաց և առանց որեւէ առաջնորդութեան իւր կողմից՝ ստիպում էր աշակերտներին ընդորինակել, նմանցնել կամ ճիշտ ևս է ասել՝ արտանկարել սկզբում այբուբենը ըստ կարգին և ապա վերջերում առանձին առանձին վանկեր ու յօդուածներ էր տալիս նոյնպէս արտանկարելու, և լինչ գարսմանք, երբ այդ կերպ դասաւանդութեան ուղղութիւնը շատ աւելի ժամանակ էր խլում աշակերտից իւրացնելու և նմանցնելու իւր գրութիւնն իսկական օրինակին ու այդ այն պատճառաւ միայն, որ դոյնակի դասաւանդութեան չորսուցանք եղանակը գուրկ էր գլխովին դաստիարակութեան հիմնական պահանջներից՝ կանոններից:

Մեր գլուցներում գրութեան ձևի մէջ միօրինակութիւն չինելու ամենաբար պատճառը համարելու է դասատու ուսուցչաց անհոգութիւնը հետաքրքրութիւնը որեւէ նոր ուղղութեամբ, ուսումնասիրելու այդ նոր ուղղութեան հիմնական տարբերութիւնը մի այլ արդէն եղած ու գոյութիւն ունեցող ուղղութիւննից: Այս իսկ պատճառով շատ տեղեր թէլ գործածութեան համար դարպոցների մէջ մտցրած են այս կամ այն նոր դասագիրքը, բայց որոշ արդիւնք չեն կարողացել ստանալ,

որովհետեւ դասագրքի ուղղութիւնը մնացել է դեռ ևս նոյն ինքն հեղինակի մօտ և դասագրքի հետ իմիասին չէ մտել դպրոց: Դորա հակառակ՝ որ գլուցներում որ մուտք էն գործում առհասարակ այդ երկուսը միանգամից՝ արդիւնքը լինում է մեծ և իշխում է գրութեան միակերպութիւն, օրինակներ շատ կան, յիշենք շատերից երկուսը. Թէոդոսիակի Խալիպեան գլուցը մի ժամանակի՝ և Ո. Եջմիածնի Ճեմարանը ներկայում և այլն: Ասանձներից հետեւում է, որ մինչև այժմ էլ մեր գրպրոցներից շատերում մեքենական ընդօրինակութեան ուղղութիւնն է տիրում, չնայելով կրկնում եմ՝ որ շատ տեղեր մուտք են գտած նոր ձևել ու առաւել նպատակայացմաք ուղղութեան հետեւղ անձանց ձեռնարկները:


Բոլոր վերել յիշածներից պարզ երեւում է, որ կանոնաւոր վայելչագրութեան դասաւանդութիւնը բընաւ չափաքառ է հիմնել լոկ մեքենական սկզբունքի վերաց, այլ դասաւանդող ուսուցեցը պէտք է անսպատճառ ծանօթացնէ աշակերտաց այդ առարկակի հիմնական կանոնների հետ, որպէս զի աշակերտի համար ոչ մի մութն կէտ չմնայ այլ ևս իրեւ գաղտնեք, որ չափակ նորան մեքենականութեան գիմելու: Շատ աւելի երկար բացարութեանց մէջ չմոնելու աղագաւ՝ մենք ուղղակի զիմում ենք այդ առարկակի դասաւանդութեան եղանակին:

Որովհետեւ Վայելչագրութիւնը միւս գիտութեանց մէջ ձանաշվում է և իրեւ գեղարուեստ, ուստի և անհրաժեշտ է մանկան ձեռքը սկզբնական վարժութիւն-

ներով զբաղեցնել ու մարզել և այդ անշուշտ կարեռը  
 է այն չափով, ինչ չափով հարկաւոր է լաւ նուագածու  
 լինելու համար սկզբեց մատների վարժութեան և դիւ-  
 րածկունութեան մէջ ընտելանալ: Այդ նպատակի համար  
 նիւթ կարող են լինել նախ՝ մազական գծերի այլ և  
 այլ վարժութիւնք, որ ընդամէնն 8 հատ են (Տես Գեղ.  
 Օր. երես 1.), իսկ ապա բոլոր տառերի արմատական  
 գծերը թուով 12 (գեղ. օր. եր. 1.) հեշտից դէափ դը-  
 ժուարը: Բայց նախքան գծերի վարժութիւնքը աշա-  
 կերտները պէտք է տողել սովորեն: Տողելը պէտք է  
 առաջնային տուածնորդուի: Ես հետեւում եմ տակտով  
 գրել տալու ուղղութեանը, մանաւանդ նոր սկսողների  
 համար, որ առաւել նպատակայարմար և ուղիղ միջոցն  
 է նպատակի հասնելու: Տակտով գրել տալն ունի հե-  
 տեւեալը օգուտները.—ա) Որ բոլոր աշակերտները միա-  
 սին գրում և միասին վերջայնում են. այդ դէպքում  
 պահպատմ է և դասատան կարգապահութիւնը, բ) Որ  
 նոքա գիտակցարար են գրում և ոչ թէ ստիպլում այս  
 կամ այն գրութեան նմանցնել և գ) Որ նա մեծապէս  
 օգնում է ապագայում և արագագրութեանը: Նախ քան  
 տակտով տողել տալու մասին խօսելս՝ հարկաւոր եմ  
 համարում լինել, որ բոլոր աշակերտները պէտք է ուս-  
 ման առաջին տարեշրջանում ունենան միակերպ միջակ  
 քարէտախտակներ նոցա երկանութեանն համապա-  
 տասխանող միաշափ ծաւալ ունեցող քանոններով: Ո-  
 րովհետեւ գրութեան համար ես ընդունում եմ չորս  
 գուգահեռական գծեր, որոնցից երկորսգի և երրորդի  
 անջրակետը նեղ պէտք է լինի քան առաջնի և երկրոր-  
 դի կամ երրորդի և չորրորդ գծե (1—1½), ուստի և  
 այդ իսկ նպատակով իմ առաջարկած քանոնի երկու

հակադիր կողմերը (երեսները) պէտք է լինին լայն (1½)  
 և միահաւասար, իսկ միւս երկուսը նեղ (1) ու նոյնպէս  
 հաւասար: Խրաքանչիւր զոյք միահաւասար երեսները  
 միմեանցից տարբերուելու համար ներկում են առան-  
 ձին առանձին գոյներով, օրինակ սև ու կարմիր: Քա-  
 րէտախտակներն ու քարէգրիչները լինելու չեն կոչու  
 տեսակից, այլ փախուկ: Եղածները մէջ ամենալաւ  
 քարէտախտակն ու քարէգրիչը A. W. Faber—ինը կա-  
 ռող է համարուիլ: Քարէտախտակները կարմիր գծերով  
 չպէտք է տողուած լինին: Այդ տարէշրջանում մանա-  
 ւանդ՝ երբէք թոյլ տալու չէ, որ աշակերտները կարձ  
 քարէգրիչներ գործ ածեն, որովհետեւ քարէգրչի կար-  
 ճութիւնը արգելում է աշակերտին կանոնաւոր կերպով  
 մարզելու իւր միանունքները գրութեան համար, որը  
 շարունակ կուչ ու ձիգ են լինում և յոգնեցնում են ա-  
 շակերտների մատները: աւելի յաբժար է, որ դպրոց-  
 ները միաշափ և երկայն քարէգրիչներ պահեն և ու-  
 սուցիչը դասի գնալիս բաժանէ աշակերտներին: Գալով  
 տողելու հարցին՝ շարունակում եմ:—Ուսման հենց ա-  
 ռաջին տարուց պէտք է ընտելացնել աշակերտներին կանոնաւոր և ուղիղ տողելու մէջ, որովհետեւ նկատուած  
 երողութիւն է, որ բարձր դասատանց աշակերտներն  
 անգամ գուրելի են այդ ամենակարեւոր և հեշտ միջոցով  
 ձեռք բերելիք վարժութիւնից: Յիշեալ պահասութեան  
 առաջն, ինչափս ասացի, կարելի է առնել հենց նայն  
 իսկ սկզբից, եթք ուսուցիչը աշակերտի ձեռքը տողուած  
 քարէտախտակ կամ տետրակ շտալով՝ կստիպէ նորան  
 ինքնին տողելու: Եթք քարէտախտակների ու քարէգրիչ-  
 ների վերը յիշած բոլոր պայմանները արդէն կատա-  
 րուած պըծած են՝ տակտով տողելը կատարվում է հե-

տեեալ կերպով.—Ուսուցիչը մեծ դիմքով և մեր պահանջածին համաձայն պատրաստուած քանոնը դնում է լայն երեսով (տափաթակութեամբ) դասաւան գրատախտակին և աշակերտաց ուշադրութիւնը հրաւիրելով իւր գործողութեան վերայ՝ ամեննեցուն լսելի ձայնով ասում է Տէ՛ և կաւիճով տողում է, Ե՞՛՛ ասելուն պէս՝ շրջում է քանոնը, Տէ՛ տողում է, Ե՞՛՛ շրջում է և այլն, որից յետոյ ստիպում է մի քանիսին գրատախտակի վերայ իւր առաջնորդութեամբ տողել տակտով։ Երբ աշակերտները տողելու կարգը ըմբռնում են, յետոյ նոյն գործողութիւնը կատարում է ամբողջ դասարանը նոյն կարգով՝ ինչպէս վերև ասուեցաւ։ Տողելը սովորելուց անմիջապէս ետքը պէտք է աշակերտները նախ մազական և ապա տառերի արժատական գծերի վարժութեաններով զբաղուին. բայց որովհետեւ այդ վերջին (արժատական) գծերն ունեն կրեանց Հետ կցուած և մազական գծեր, ուստի և ուսուցիչը պէտք է նախ մազական գծերի նշանակութիւնը բացատրէ աշակերտներին։ Նախապէս նոյն իսկ դասարանում արդէն տակտով տողուած չորս գծերի մէջ գորեւելիք արժատական գիծը նախ և առաջ ուսուցիչը Տէ՛ ասելով գրում է գրատախտակի վերայ նոյնապէս չորս գծերի մէջ, որի միջոցին աշակերտները պատրաստի նայում են, ուսուցիչը այդ բանը կրկնում է մի քանի անգամ և գրատախտակի վերայ մի ամբողջ տող գրելոց յետոյ հասկացնում է, թէ իւրաքանչիւր արժատական գիծ քանի բաղկացնումն ունի, գրելիս որպէսի հակումն պիտի ունենալ (Տես գեղ. օր. Եր. 1, տող 1 և 5-ր), այսինքն որ կողմէց դէպէս որ կողմէն է գրվում—աջից—ձախ, և հօքան շեղուածքով, այն է՝ հետեւալ ձեռվ.—



Ի՞նչպիսի հեռաւորութիւն պէտք է ունենան նոքա միմեանցից, որպիսի հաստութիւն (Յիաչափ), որ տողեց են սկսում, որ տողում վերջանում: Այդ բացատրելու ժամանակ նեւթերը շատ են նոյն իսկ դաստիան մէջ. Քանզններից, գրատախտակից, աշակերտական նստարաններից, նոյն իսկ աշակերտաց դասաւորութեան շարքից և այլն՝ կախող է նա օգուտ քաղել:

Այսպէս և այս ձեռվ վարժեցնում է ուսուցիչը աշակերտներին և միւս արժատական գծերի գրութեան մէջ, որ շաբաթական երեք դաս հաշուելով՝ կարելի է հիմնաւոր կերպով աւանդել երեք շաբաթուան ընթացքում։ Սկզբում ուսուցիչը մեծ հսկողութիւն պէտք է ունենայ, որ աշակերտները չէն ասելու միջոցին մէկ արժատական գիծ միայն քաշեն, որ տակտի նշանակութիւնը չկօրչի, ապա թէ ոչ պատահում է, որ նոքա ոկարեց տակտի վերայ ուշադրութիւն չդարձնելով՝ շարունակ գրում են և այդ դառնում է մի տեսակ վատ սովորութիւն, որի առաջն ապագակում շատ գժուար է լինում առնել: Այնուհետեւ նա անցնում է արդէն սովորած արժատական գծերից տառերի կազմութեան գործին՝ սկզբուց պարզ ձեակերպութիւն ունեցող տառերին նախապատութիւն տալով։ Պէտք է միանգամ

ընդ միշտ ընդունել, որ մի տառի մէջ որքան արժա-  
տական (հաստ) գիծ որ կայ, այնքան էլ բաղխումն ունի  
նա. այսպէս օրինակ « տառը ունի երկու, իսկ « տառը  
երեք բաղխումն և այլն; Եթզ այդպիսով աշակերտները  
գիտեն, արդէն ձեւակերպել « և « տառերը, ուսուցիչը  
այդ երկու տառերը նախ գրել է տալիս միմեանցից  
անջատ և ստորակէտներով բաժանուած, որ լինելու է  
երեւ մի դասի նիւթ, իսկ ապա երար կցուած, որպիսի  
գրութիւնը աւելի դժուար լինելով՝ կլինի Երկրորդ դասի  
նիւթ. սորանից յետոյ նոյն տառերով կազմել է տալիս  
այլ և այլ նշանակութիւն ունեցող բառեր, որք են առ,  
առ, առ, առ, առ և այլն. (Գեղ. Օր. Եր. 2. կըթու-  
թիւն 1.):

Աշակերտը ապա սովորում է և Երկրաբառը և առառը. գրում է ըստ առաջնությն նախ անջատ, ապա կցուած և հուսկ յետոյ այդ չոր ու ցածրաք և Երկրաբառով և տառով չի բաւականանաւում, այլ նախընթաց արդէն սովորած « և » տառերն էլ իրեն օգնութեան առնելով՝ կազմում է այնպիսի բառեր, որոնց մէջ բացի վերջին սովորած տառը՝ գտնուին և նախընթացները, այսպէս օրինակ՝ նա կազմում է առ, ոռ, ոռու, առ ու և այլն (Դեղ. օր. եր. 2. կոթ. 2.).

Սովորում է նա գըել և, ու, ու տառեցը և անջատ  
ու կեց գըելուց յետոյ կազմում է ուղարք սով, դուռ, փորս,  
սով, որ, որ, փոս, ոփոս, ոփոս ուղարք բառեցը, (Գեղ. օթ. եթ.  
2. կըթ. 3.):

Գորանից հետեւում է, որ ուսուցելը չպէտքէ թողնէ, որ աշակերտը միորենցէ տառ սովորելուց յետոյ չգրելով՝ նորան՝ այդ տառի ձեակերպութիւնը՝ մոռացութեան տարի՝ իրաքանիւր անգամ նոր տառ սովո-

ეხენას აქტოდ է აღსათხელ, იმ აკეთ ნიმუში თავის ჰავაშებ  
ან გილო ქართულმანებრ ზამარ ჰავაშებს მარცხებ  
თავისებრ მარცხებ, ასევე სამარცხებ გარისად ხელ მანებ მანებ  
ფასათხოვები მარცხებ: სახლოებ გენერალმარცხები ესები, იმ  
გაქტოდ ე გათავაზნანალ ხელმარცხებ ფასათხოვები მარცხებ  
ნიმუშად გათხოვის იმას ესებ თავის გრისმანებან ზამარ, ასე  
ფასათხოვები მარცხებ ჰავაშებად გათხოვის გრები თავის ეს-  
თოვ აქტოდ է აღსათხელ, იმან ჰავაშებს է, გათავაზნებ  
აკეთ თხოვას გათხოვებს მარცხებ ნიმუშ ნიმუშ გათხოვ  
აორაზარ კელის ნიმუშ გრების, იმავე კეთ აღსახვაშოვად ათხელს სა მარცხ-  
დის იმან განსაკუთრებულ გრების:

Ապա աշակերտները գրում են այբովենը — Ք.,  
որից յետոյ այն տառերը, որոնք վարժ գրութեան ժա-  
մանակ ծիանգամից են՝ գրվում, որք են.— Է, Կ, Տ. Ե,  
Ֆ, Լ, Վ. (Գեղ. օր. եր, 7. այբովենից յետոյ). սոցա էլ  
յաջորդում են առողջանութեան նշանների գրութեւնը  
(նոյն երեսի նոյն տողում):

Տառեցի գրութեանն հետևում են թղուանշանները գրութիւնը իրենց արմատական դժեռով (Երես 7.):

Որովհեսեւ առհասարակ նկատուած է, որ այս  
աշակերտները, որք տառերի համակարգութեան կամ  
ալսպէս ասել, նոցա օքինական համաչափութեան հետ

Եթէ սկզբեց հեմնաւոր կերպով չեն ծանօթանում, նոքտ ապագայումն ևս դժուարութեամբ են ուղղում իրենց սխալը, ուստի և ուսուցեցը կը ուշագրութեան մեծագոյն մասը պէտք է կենդրոնացնէ դորա վերայ, հասկացնելով աշակեստնելին, թէ մնչ կանոններով և մնչ մասերով բոլոր տառերը համաձայնում են իրար հետ:

Հայկական բոլոս տառերը բաժանվում են 4 դասակարգութեան կամ խմբի, որք են.—

ա) Այն տառերը, որոնք գրվում են միջին երկու գուգահեռականաց մէջ («, », «, », «, », «, »).

թ) Նոքա, ոլոնիք գրվում են առաջին երեք զուգա-  
հեռականաց մէջ (է, է, ծ, ծ, հ, մ, մ, ն, ն)

գ) Նորա, որոնք գըլում են վերջին երեք զուգահեռականաց մէջ (Է. է, ո, լ, ւ, շ, ւ, չ, ջ, ա, յ, ս, ո, ո, ո). և

դ) Այն տառերը, որոնք բոլոր 4 զուգահեռականաց մէջ են գրիում (է, ի, ։, ՞, ՞, ՞),

Այս իսկ հիման վերայ աշակերտները ուսուցչելիքնորդութեամբ պէտք է լաւ ըմբռնեն, որ երկրորդ դասակարգի տառերի ստորին մասերը, երրորդ դասակարգի տառերի վերին մասերը (գլուխները) և չորրորդ դասակարգի տառերի միջին կազմից մասերը անպատճառ պէտք է համաձայնեն ու հաւասար լինին առաջին դասակարգի տառերին, օրինակ ու բայց (երես 7-րդ):

Տառերի այս համաձայնութիւնից է կախուած առ-  
հասարակ գրութեան գեղեցկութիւնն ու համաշափու-  
թիւնը, որի վերայ, կրկնում եմ, պէտք է մեծ ուշք  
դարձնել: Աւսուցիչը այս կանոնը շօշափելի գարձնելու  
համար կարող է և պէտք է անպատճառ զանազան

փորձելով ընտելացնէ աշակերտներին ինքնուրոյնաբար իրավուրծելու և իւրացնելու այդ կանոնը. դորս համար հարկաւոր է նաև գրութեան չորս գիծը վերածել երեք՝ ջնջելով առաջին գիծը, և ստիպել աշակերտներին գրել վերջին երեք գծերի մէջ միայն. այդ դէպքում աշակերտը հարկադրվում է առաջին գծի վերայ վերջացող տառերի սահմանը ինքնին որոշել, այնաէս որ մէ ամբողջ տող գրելուց յետոյ՝ դէպէ վերե առաջին գծի վերայ վերջացող տառերը մէ գծի վերայ լինին և հաւասար երկայնութիւն ունենան միևնույն տառի երկրորդ մասի հետ, որ գտնվում է արդէն երրորդ և չորսրորդ գծերի մէջ—վարժումն աշաց և որոշումն տարածութեան (Եր. 10-րդ.—Ծրբանինքը Տիրանի ծառերի առաջակա ծիրաւ էին ու ծէծուաւ և այլն): Այդ վարժութիւննեց յետոյ թողնելով առաջինը, պէտք է ջնջել չորսրորդ գիծը, որով աչքերի վարժութիւնը կուզդուի գէպէ ներքե և աշակերտը կստիպուի օրոշել այն տարածութիւնը, որ պէտք է հաւասար լինի առաջին և երկրորդ գծի հեռաւորութեանը. (Եր. 10-րդ.—Գերադա ու Գործեկին գնացին և այլն): Վերջապէս ջնջելով առաջին և վերջին գծերը և միջին նեղ գուգահեռականը միայն թողնելով՝ մենք կստիպենք աշակերտին ինքնին որոշելու գրութեան ժամանակ առաջին և չորրորդ գծերի սահմաները (Եր. 10. Ներքուոր Տիգրոնը Ռուբենի դուռ և այլն): Այս կերպ հետեւղականութեամբ վարուելով՝ աշակերտը կարող է գրել և առանց տողի: Եթէ վերը լիշած կանոնների և ընթացքի ուղղութեան մէջ նոյն կերպ խիստ պահանջող լինին և միևնույն դասատան միւս ուսուցիչները, մանաւանդ Հայոց լեզուի ուսուցիչը, աշակերտներին տուած գրաւոր աշխատութեանց ժամանակ՝ գործը

շատ կթեթևանայ և աշակերտները շատ կարճ միջոցի  
մէջ կանոնաւոր և վայելուչ գրել կողորեն:

Ինչ կվերաբերի գլխատառերին՝ նոքա ևս ունին  
իրանց արժատական գծերը, որք առանձին կրթու-  
թիւններով պէտք է աւանդուին աշակերտաց ուսման  
երկրորդ տարուց սկսած, որովհետեւ այդ մասը համե-  
մատաբար բաղադրեալ գրով՝ աւելի էլ ձեռքի վար-  
ժութիւն ու պատրաստականութիւն է պահանջում ու-  
սանողից: Գլխատառերի արժատական գծերի թիւն է  
ընդամէնն 13. (Եր. 8-րդ). աշակերտաց հեշտութեան  
համար որքան կարելի է եղած՝ աշխատած ենք գլխա-  
տառերին տալ թէ պարզ և թէ՝ միենոյն ժամանակ  
գեղեցիկ ձեւ (Եր. 8-րդ):

Գլխատառերը կազմելիս՝ նախ նշանակել ենք  
ամեն մինի արժատական գծերը մազական գծերով և  
անշատ, իսկ ապա միացնելով նոցա՝ կազմել ենք գը-  
խատառը: Արժատական գծերի նախ մազական գծերով  
նշանակելու նպատակն այն է, որ աշակերտը հեշտ ըմ-  
բռնէ, թէ իր արդէն առաջուց սովորած որ արժատա-  
կան գծերն են որոշ գլխատառի կազմիչ մասերը բաղ-  
կացնում, որպէս զի հեշտ և գետակցարար կարողանայ  
գրել: Նոյն կերպով (մազական գծերով) և միենոյն  
նպատակով էլ նշանակել ենք հասարակ տառերի ար-  
ժատական գծերը (Ցես դաստիերի թուանշաններով  
նշանակած կրթութեանց սկզբները): Այս բոլորից հե-  
տեւում է, որ մազական գծերով նշանակուած արժա-  
տական գծերը աշակերտաց գրելու համար չեն նշա-  
նակուած, այլ միայն դիտելու: Գլխատառերը իրանց  
մազական—արժատական գծերի հետ միասին մենք  
գետեղել ենք նախ հեշտից գէպի դժուարը՝ հետեւալ

կարգով.—Ա, Ա, Ո, Ռ, Տ, Փ, Բ, Ի, Խ, Չ, Պ, Կ,  
Հ, Ճ, Է, Ե, Գ, Փ, Ժ, Լ, Ը, Ղ, Շ, Զ, Ջ, Զ, Զ, Զ, Զ,  
Յ, Յ, Յ, Մ, Ն, Ֆ: (Եր. 8-9), իսկ ապա միեւնոյն  
գլխատառերը այբուբենական կարգով, բայց առանց  
մազական—արժատական գծերի (Եր. 9.), որից յետոյ  
նշանակել ենք մի քանի յատուկ անուններ առ հասա-  
րակ այն տեսակ գլխատառերով սկսուած՝ որոց գըու-  
թիւնը համեմատաբար աւելի դժուար է աշակերտի  
համար, որք են.—Ծաղիկ, Ճանիկ, Յուսիկ, Գենոր, Օլին,  
Խորին, Թորգոմ, Եղինիկ, Փաւստոս (Եր. 9.): Բայց ուսու-  
ցիչը միայն իշխալ յատուկ անունների գըութեամբ չը  
պէտք է բաւականանայ, այլ պէտք է գրել տայ և բո-  
լոր գլխատառերով սկսուող այլ և այլ յատուկ անուններ:

Դասատետրը պարունակում է իւր մէջ երկու տե-  
սակ գըութեան օրինակներ, մինը փոքրահասակների,  
իսկ միւսը չափահաս աշակերտների համար:

Դասատետրի տասներորդ երեսով լերջանում է  
առաջին ձեւ (փոքրահասակների) գըութիւնը, ուր գե-  
տեղուած են գըութեան համար երեք տեսակ օրինակ-  
ներ: Սոցա մէջ ուշագրութիւն է գարձրած առհասա-  
րակ այն տառերի յաճախակի գըութեան վերայ, որոնք  
երենց կազմութեամբ աւելի դժուար գրելի են, որք  
են.—

ա) ծ, և և ՅԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ

(Առաջին օրինակ).

Ծերունիները ծիրանի ծառերի տակ նստուած՝  
ծխում էին ու ծիծաղում: Աղէսանդր արտաշը Քանա-

տեռի վանդի ասրի վերալ անդակում է: Զկան չուփն  
չուղպ են ասում:

բ) + և ; ՏԱՐԵԲԻ ՀԱՄԱՐ

(Եթ կ ը ո ը դ օ ր ի ն ա կ).

Գէորգն ու Գարեգինը գնացին Գետաշնցի Գրի-  
գորից ու Գալուստից Քարի գնեցին, անդուժ գողերը  
գիշերով գողացան:

Ընյակը չորս եջնելիս քարանչաւի մօտ չեռ սանչը  
չեք է չուում:

Արյագանքը չորս մէջ արյակած չայնը անդըա-  
դաբչնում է:

բ) + և ; ՏԱՐԵԲԻ ՀԱՄԱՐ

(Եթ կ ը ո ը դ օ ր ի ն ա կ).

Ներկարար Տիգրանը Խուբէաի տառ ախագալթի  
վահակը գեղին գոյնով ներկում է:

Եօթն օր օրորցի մօտ ծունկ չոգած՝ երգելով օր-  
քեցի հետանդ մանկիկ ծոլակին:

### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ

Ս ո վ ո ր ա կ ա ն ձ և .

Աերոյեղեալ ձեւ գրութիւնը վեց երես տեղ է բըռ-  
նում և սկսում է 11—րդ երեսից, որին Սովորակն Գրութիւն  
անուանելուս պատճառն այն է, որ աշակերտները պէտք

է երանց գասընթացն աւարտելէն ետքը նոյն գրու-  
թեանը տիրապետած լինին և գործադրեն արդէն  
կեանքի մէջ, բայց երբէք չպէտք է կարծել թէ այդ  
ձեւ գրութիւնը հիմնական տարբերութիւն ունի առա-  
ջին ձեւ գրութիւնից. ընդհակառակին դա ծնունդ է ա-  
ռաջնի միայն յարմաքցած ու կոկուած՝ արագագրու-  
թեան համար: Ուսուցեցը առաջին ձեւը երկրորդին  
անցնելու ժամանակ գլխաւորապէս մի երկու կէտերի  
վերայ պէտք է ուշք գարձնէ, որոնցից միայն կախուած  
է երկրորդ ձեւ գրութեան ընդհանուր տեսքի տարբերու-  
թիւնը, այն է, ա) Երկրորդ ձեւ գրութեան մէջ տո-  
ռերը և նոցա արձատական գծերի ծալրերը չեն կլորա-  
նում, այլ սրանում են,

բ) Աննշան փոփոխութիւն մտնում է միայն՝ այս-  
պէս ասած՝ պոշաւոր տառերի մէջ, որք են.—ւ, ւ, ւ,  
ւ . . . և այլն, որ փոխանակ վեր գնալու մնում են  
չորրորդ գծի վերայ (\*)

գ) Աննշան փոփոխութիւն ու և չ տառերի մէջ,  
դ) և և չ տառերի մէջ, որք կազմվում են և տա-  
ռերը, և

ե) և և տառերը երկրորդ խումբից փոխագրվում  
են չորրորդ խմբի (դասակարգի) տառերի մէջ:

Մնացած տառերը պահպանում են իրենց ընդհա-

(\*) Պէտք է գիտենալ, որ բոլոր պոշաւոր դրեըլ առա-  
ջին ձեւ կեց գրութեան մէջ սառերի սկզբներում և մէջներում  
գրվում են միշտ ուղիղ՝ առանց կլորանալու, իսկ բառերի վե-  
ցերում կըր: Բացաւութիւն կազմում է միայն և տառը, որ  
անխար ամեն տեղ էլ կլոր է գրվում: Այլ և նոյն գրեըլ կըր  
կարող են գրութիւն միայն անջատ գրութեան ժամանակ:

նուը տեսքը այն գանազանութեամբ միայն, որ ինչպէս  
վերևն էլ յեշենք՝ միանում են միմեանց սրածայր և  
ոչ թէ կրո՞:

Վերոյիշեալ ձեւ գրութեմը, ինչպէս ասուեցաւ՝  
սկզբում է 11-րդ երեսից, օրտեղ սկզբում տառերը  
կազմում են իրենց արմատական գծերից, ապա բա-  
ժանուած են նոքա խումբերի, իսկ վեշջում գտնվում է  
մի օրինակ անջատ գրուած և մեծ դիրքով գրութեան  
ընդհանութ բնաւորութիւնը (տեսքը) ցոյց տալու համար:

Տասն և երկուերրորդ երեսում գտնվում է երկու  
տեսակ գրութիւն, անջատ և կից, երկուքն էլ երեք  
տողերի մէջ, բայց մի տեղ պակասում է առաջին, իսկ  
միւս տեղում չըրբորդ գեծը:

Տասն և երեքերրորդ երեսում նոյնպէս կան երկու  
տեսակ օրինակներ, անջատ և կից, բայց երկուքն էլ  
երկու տողերի մէջ գրուած:

Տասն և չորսերրորդ երեսը ցոյց է տալիս մի նա-  
մակի ձեւ՝ մի տողի վերայ: Ուսուցեալ պէտք է խստիւ  
պահանջէ, որ աշակերտները եւրացնեն ճշտութեամբ  
նամակների ձեռքը, որը մէջ, ինչպէս նկատուած է, նո-  
քա շատ թոյլ են լինում: ՚Ի դէմ, միայն նամակներով  
չպէտք է բաւականանալ, այլ կարեոր է նաև գրել  
տալ մօրհակների, ինդքագրերի, հաշիւների և այլ  
այսպիսի թղթոց կանոնաւոր ձեռք, որոնց մէջ նոյնպէս  
դեռ կեանքի մէջ մտնելուց յետոյ էլ երկար մէջոց նո-  
քա խամ են մնում:

Տասն և հինգերրորդ երեսում կայ մի ոտանաւոր  
առանց տողի, և վեշջապէս՝

Տասն և վեցերրորդ երեսում նոյնպէս առանց տողի  
գրուած է մի օրինակ՝ թուանշաններ պարունակող Այդ-

ձեւ գրութեմը իսկապէս կազմուած է արագագրութեան  
ձեւ ցոյց տալու համար, որտեղ որոշեալ տառեր փոքր  
են չփոխութեան են ենթարկուում:

Արագագրութեան մասին հարկ հմ համարում  
փոքր ինչ աւելի ընդարձակօրէն խօսել:

Մեր նախնիքը արագագրութեմ ասած բանը չու-  
նէն, այլ դորան փոխարինում էին մասամբ ծածկա-  
գրութեամբ կամ ինչպէս ասում են՝ համառօտագրու-  
թեամբ: Դորա օրինակները մենք յաճախ տեսնում ենք  
մեր ձեռագիր աւետարանների ու գրքերի, նոյնպէս և  
շիրմների արձանագրութեանց և եկեղեցեաց յիշատա-  
կարանների վերայ, որոնք շատ անգամ չեն կարդաց-  
վում և կամ շատ դժուարութեամբ են կարդացվում:  
Կան այնպիսի ծածկագրութիւններ, որք մի քանի տե-  
սակ են կարդացվում: Այդ երկութեւ մասամբ բացա-  
տրվում է նորանով, որ մագաղաթը հին ժամանակնե-  
րում թանկ գնով էր ձեռք բերվում, ուստի և աշխա-  
տում էին քիչ մագաղաթի վերայ որքան կարելի է՝  
շատ բան տեղաւորել: Այդ երկում է նաև այն հան-  
գամանքից, որ մագաղաթի վերայ գրվում էին միայն  
ընտիր՝ և նշանաւոր մարդկանց շարագրութիւնները,  
գլաւորապէս արքայական հրովարտակներ, կաթողի-  
կոսական կոնդակներ և այլն: Այսպէս ահա, հին  
ձեռագրների յիշատակարաններից մենք տեսնում  
ենք, որ այս ինչ կամ այն ինչ հարուստ իշխանը  
լր ծախքով մի աւետարան է գրել տալիս և ըն-  
ծալում այս կամ այն եկեղեցուն, և այլն: Ուրեմն  
ծածկագրութեան ծագումն իւր ժամանակին ունեցել է  
իւր բնական պատճառները, որոնցից մինն էլ այն է, որ

Հին ժամանակներում իսրթին ծածկագրութեանց հեղինակները աւելի մեծ ժողովրդականութիւն էին վայելում: Վերն ասացի, որ մեր նախնիքը արագագրութեան հետ ծանօթ չէին և ինչպէս կարող էին ծանօթ լինել, երբ նախ կարեքը շատ չէր և երկրորդ, որ նոքա տառերը գրում էին անջատ և որ գլխաւորն է՝ տպագիր, որ արագագրութեան համար երբէք հիմնական կանոնների չէ կարող ենթարկուել: Այժմ, երբ բարեբազտաբար մի թերթ ծագաղաթի գնոլ մեծ քանակութեանը գրելու թուղթ կարող ենք ձեռք բերել՝ կարեք չունինք իհարկէ ծածկագրութեան գիծելու, այլ արագագրութեան պէտք ունինք միան, որ թէ մեր գալոցական գործում և թէ կեանքի մէջ առ հասարակ՝ ոչ պակաս տեղ է բռնում փոխադարձ յարաբերութեանց ժամանակ: Այդ նպատակին հասնելու համար, մեր կարծիքով, պէտք է տակտին մեծ նշանակութիւն տալով՝ գրութեան այդ սխտեմը մտցնենք մեր գալոցների մէջ:

Ես արդէն ասացի, թէ ինչպէս են գրվում տակտով՝ առանձին տառերը. այժմ՝ աւելացնում եմ, թէ տակտով պէտքէ գրուին նաև առանձին բառեր և մինչև անգամ առանձին նախադասութիւններ և այդ ուսման սկզբի տարիներում. ասացի նոյնակչ, որ մի տառի մէջ որքան հաստ գիծ որ կայ, այնքան էլ բազմութն ունի նա: Սկզբում, երբ աշակերտները նոր են սկսում գրել սովորել, տակտը պէտք է ծանր ընթանայ, իսկ յետոյ հետզետէ նորա ընթացքը պէտք է արագանայ և վերջապէս փոխանակ բոլոր տառերի արժատական գծերն առանձին առանձին տակտով գրելու, ամբողջ տառը մի տակտով—բազմութով գրել տալու է: Այսպէս օրինակ «ապակին թափանցիկ է» նախադասութիւնը

սկզբում ՅԵ բազմութով գրելով՝ վերջում գրվում է տառերի քանակութեանն հաւասար բազմութով, այն է 15 հատ համարելով: Լաւ կլինի մի անգամ ընդ միշտ կանոն ընդունել, որ բազմութան համարեք տեէ մինչև 10-ը և ապա կըկին սկզբից համարուի: Այսպէս շարունակելով՝ մէկ բազմութով կարելի է գրել տալ և մի ամբողջ բառ, օրինակ՝ վերսիշեալ «ապակին թափանցիկ է» նախադասութիւնը աշակերտը կարող է գրել երկու բազմութով: Տակտով գրել տալու ժամանակ պէտք է ուսուցիքը խստել պատճեն կամ այն գրեն, ինչ որ առաջարկուած է նոցա տակտով գրելու: Նա երբեմն կարող է և պէտք է ընդհատէ տակտը և ստուգէ, թէ արդեօք բոլոր աշակերտներն էլ այն տառը վերայ են կանգ առել, որի վերայ որ ուսուցիչն ինքը տակտը ընդհատել էր՝ թէ ոչ:

Տակտով գրելու համար բոլոր աշակերտների տեսքակիներն էլ պէտք է միակերպ տողուած լինին, այսինքն տողերի թէ քանակութիւնը և թէ լայնութիւնը հաւասարաշափ, որպէս զի տակտն ասելու ժամանակի ոմանք փոքր փոքր գրելով՝ շուր վերջացնեն, իսկ այլ ոմանք մեծ մեծ գրելով՝ ուշ: Անձանօթ տառ գրել տալու համար խկոյն չափաք է տակտով սկսել, այլ պէտք է թոյլ տալ, որ աշակերտները այդ անձանօթ տառը մի քանի անգամ առանց տակտի գրեն, ծանօթանան հետը և ապա թէ սկսին առանց դժուարութեան տակտով գրել:

Արագագրութեան մասին այսչափս բաւական համարելով՝ գանք այժմ մի քանի կարեոր հարցերի պատասխանները տալու, որպէսի հարցերը ինքն ըստ ինքեան ծագում են իրաքանչիւր ուսուցչի մէջ և որք ընդհանրապէս մեր ասածների ընդհանուր եղակա-

ցութիւնքը կարող են համարուել: Այդ հարցերն են. —

Ա) Ի՞նչ նպառո՞ւ: ունի վայելսություն-լեռ ստուցին դաստիարակութեան և ի՞նչ վախճանական հետապնդություն կատար այդ առարկայի բառութեանը մէջ բարդութեանը: —

Վայելսագրութեան առանձին դասաւանդութեան էական նպատակն է — մարզել աշակերտի ձեռքն այնպէս և այն շափով՝ որ գեղեցիկ, պարզ և սահուն կերպով կարօղանայ գրել, սերէ մաքրութեանը գրաւոր աշխատանքի ժամանակ, զարգացնէ իւր մէջ աշքի շափը և գեղեցկութեան ձաշակը ինչպէս առանձին տառերե պատկերը ձևակերպելում, այնպէս էլ ամբողջ տողի կամ երեսի դասաւորութեան ու շարայարութեան ժամանակ: Դասաւանդութեան վախճանական հետեանքը լինելու է այն, որ սանելը լրացնէ անպատճառ մի հաստատուն և որոշ գրութեան ձև և կարողանայ առանց որևէ նպաստիք մեջոցների — տողաշարե, քանոնի, զծի և այլն գրել և լեռջապէս վարժէ իւր ձեռքը արագագրութեան մէջ պահպանելով ընդ մէշտ գրութեան ընդհանուր և կանոնաւոր ձեռը:

Բ) Ի՞նչ ի՞սո՞ւ ո՞չ ո՞ւ անենայ վայելսություն-լեռ ստուցին մէջ առարկաների հետ:


Վայելսագրութեան դասաւանդութեանը պէտք է հեշտացնէ սանելիներե գործը ուսման միևն առարկաների գրաւոր աշխատանքի ժամանակ:

Գ) Ի՞նչինք արդարին պայմանների վերայ պ՞ո՞չ և ուշարբութեան դաշտուն վայելսություն-լեռ դաշտանի:

Պէտք է ուշք գարձնել, որ սանելիները նախ և առաջ առողջապահական պահանջներին համաձայն պատրաստուած կանոնաւոր նստարաններ և գրասեղաններ ունենան և նստարանների լեռայ նստեն կանոնաւոր:


Առանձին ուշագրութեան պէտք է գարձնել գրչի և տետրակի կանոնաւոր բանուածքին գրութեան ժամանակ: Կ հակառակ դէպօ՛ բացի անկանոն և վատ գրութեանից՝ կվտանգուի նաև սանելիների առողջութեանը: Աշակերտը պէտք է ուղիղ նստի, չափաքէ դիպանի կուրծքը գրասեղանի եզրին, ուսները չափաքէ կախընկնին խաչմերուկ ձևով կամ սեղանի տակն երթան, այլ նոքապէտք հաստատուն լենարան ունենան: Գրութեան ժամանակ, մի փոքր դէպօ՛ առաջ պէտք է ուղղուած լինի, բայց ոչ շատ մօտիկ թղթեան: Աջ ձեռքը և արձունիքը պատ կերպով պէտք է գրուած լինին սեղանի վերայ, իսկ ձախ ձեռքի թաթը պէտք է պահէ տետրակն այնպէս, որ տառերի շեղուածքը մօտաւորապէս լինին ուղղահայեաց սեղանի ստորին եզրի լեռայ: ուրիշ խօսքով, որ տետրակի աջակողթեան եզրն ու սեղանի կողը կազմեն լրանց մէջ սուր անկիւն 30°—35°—ով, ահաւասիկ հետեեալ ձևով:

Գ ս ա ս ե ղ ա ն



Այդ գրութեան մէջ տետրակը հետզհետէ պէտք է սահերացանայ դէպօ՛ վեր:

Նատ լաւ կլինի, որ ստորին գասատանց մէջ, որտեղից որ աշակերտները նոր պէտք է սովորեն կանոնաւոր նստուածքին, վայելչագրութեան ուսուցիչը աշակերտական լրաբանչեւը գրասեղանի երեսին, նորա վերայ նստոր աշակերտաց թուին համաձայն գծեր նշանակ է առանձին մի գոյնով, որոնք կ'որոշեն ճշտութեամբ նոցա տետրակիների ունենալիք շեղուածքը գրութեան դասերի ժամանակի, որ կծառայէ նոյնակս այլ առարկաների ուսուցչաց համար նոցա՝ աշակերտաց տուած այլ գրաւոր աշխատանքի ժամանակ հետևեալ ձեւվ.



Վերուիշեալ նկարի մէջ 1, 2 և 3, թուանշանները ցոյց են տալիս ամեն մի աշակերտի նստելու տեղը: Գրասեղանի լայնութեամբ անցկացրած գուգահեռական գծերը տետրակիների աջակողմեան եզրի շեղուածքը, որ գրասեղանի ստորին եզրի հետ կազմում է  $35^{\circ}$ : Այս միջնոր մեծապէս կնպաստէ աշակերտներին փոքր հասակից սկսած հմտանալ և լրացնել գրութեան ժամանակ տետրակիների կամ քարէտախտակիների ունենալիք

կանոնաւոր գերքը գրասեղանի վերայ, որովհետեւ այդ կանոնաւոր գերքից է կախուած նոյն իսկ աշակերտի մարմնի կանոնաւոր նստուածքն ու բռնուածքը, որ կարող է շօշափելի կերպով վտանգուել հենց նոցա դեռափթիթ: Հասակից սկսած: Գլխի ցած խոնարհեցնելուց յառաջանում է կարծատեսութիւն, կորացրած մէջքով նստելը՝ ծուռմ՝ կորացնում է ողնաշարը, կործքքը սեղանի եզրին սեղմելուց կրծքացաւ է յառաջանում և այլն:

Գրիչը բռնած ժամանակ մի ծայրով պէտք է յենուած լինի նա միջի մատի վերայ յատկապէս այն տեղում, ուր նոյն մատի եղունկն է սկսում, իսկ միևն ծայրով ցուցամատի և բոյթի կազմած գոգաւորութեան մէջտեղում, ցուցամատը պահում է գրիչը վերևից և կանգնում է միջին մատից փոքր ինչ յետ, բոյթը սեղմում է գրչին ձախ կողմից և գտնվում է ցուցամատից այնքան հեռու, որքան այս վերջինը միջին մատից. Ճկոյթը միայն գիշում է թղթին լրւ վերջին խաղով, որ կազմում է ստորին աստիճանը այն սանդղաձև դրութեան, որ կազմում են իրար մէջ ճկոյթը, մատանու մատն և միջին մատը. գրչի ծայրը փոքր ինչ շեղվում է դէպի ձախ, ցուցամատի ծայրից մինչև գրչի ծայրը եղած հեռաւորութիւնը պէտք է լինի մօտաւորապէս մէկ ու կիս թթաշափ:

Նատ լաւ կլինի, որ ուսուցիչը ինքը թէ կանոնաւոր նստուածքի և թէ կանոնաւոր գրիչը բռնելու նշանակութիւնը բացատրելու համար սկզբներում ինքը ցոյց տայ շօշափելի օրինակով, այն է նստելով և բռնելով գրիչը, որ աւելի շուտ նպատակի կհասցնէ, քանի խօսքերով բացատրութիւնը:

Դ) Ի՞նչ է բարձր պետք է օգուտը կ Գեղագրութեան օրինակներով, ժամանակով և դրույթով (транспорантъ).—

Որովհետեւ ինչպէս միւս առարկաների, նոյնպէս և գեղագրութեան դասաւանդութեան ժամանակ մեծ նշանակութիւն ունի շոշափելի օրինակը և ուսուցչի կենդանի խօսքը, դորա համար էլ լայելչագրութեան ուսուցելը սկզբում պարտաւոր է ինքը գրել դասաւան գրատախտակի վերայ և բացատրել աշակերտաց այն բոլորը, ինչ որ նոքա գրելու են տեսրակների վերայ։ Այդ պատճառով էլ Գեղագրութեան օրինակները (Ճեռնարկները) ուսման սկզբում (ա. տարին) գործածութեան համար երկրորդական տեղ անտք է բռնեն և կարելի է տալ աշակերտաց միայն առաջին վեց ամսից յետոյ։ Տողաշարները ոչ մեր գէպօւմ չաշտք է գործածել, ըստ որում նոքա լիովին վնասակար են և այդ այն պատճառով, որ խլում են աշակերտի ուշագրութիւնը գրութեան վրայից, պահանջում են թափանցիկ թուղթ, յաճախ չեն համապատասխանում տառերի ցանկալի չափին (երկայնութեանը կամ կարճութեանը), փշացեն աչքի տեսութիւնը և պատճառ են դառնում գլխի անկանոն գրութեանը ստիպելով յաճախակի աչքերը մօտեցնել թղթին և ընդհակառակին։

Ե) Ի՞նչ հետեւողականութիւն պետք է պահպանուի վայելչութեան դաշտի ժամանակը և ե՞րբ դեռ ու ո՞ւրիշ դաշտուն առաջանահան։—

Առաջին տարուան առաջին կիսամեկում աշակերտները պէտք է տառերի հիմնական թաղադրիչ մասերց կազմեն բոլոր տառերը իրանց բառակազմական կը թութիւններով, իսկ երկրորդ կիսամեկում ազատ-

գրութիւն առանձին առանձին նախադասութիւններից կազմուած։

Երկրորդ տարին, ինչպէս արդէն միանգամ ասուեցաւ, սկսվում է գլխատառերը գրութիւնը պարզ և հեշտ կազմութեամբ գլխատառերին նախապատութիւն տալով, իսկ հասարակ գրութեան տողերի մեջի տարածութիւնը և տառերի երկայնութեան չափը աստիճան առատիճան փոքրանում են և գրութեան տակտը արագանում է, իսկ տարուան վերջին կարելի է թողնել գրելու ոչ աւելի քան երեք տողի մեջ։

Երրորդ տարին թողնել երկու տող միայն (սկզբում լայն, իսկ ապա նեղ), վերջում վարժեցնել սանիկներին մի տողի վերայ գրելու մէջ։ Այս շրջանում պէտք է գրւխարապէս ուշք գարձնել աշակերտների արագագրութեան վերայ, երբեմն փոփոխակի տալ սանիկներին ծանը գրութեան համար առանձին օրինակներ։

Չորրորդ տարին գրել տալ սկզբում մի տողի վերայ և ապա վերջացնելով մի տողն էլ՝ վարժեցնել առանց տողի գրելու մէջ ընդունելով առաջնորդ տեսքակի վերին եղար կամ դնելով փոքր ինչ ներքեւց մի շերտ ծալուած թուղթ գուգահեռական նոյն եղբին։ Դ հարկէ առաջարկուած ժամանակամեջոցները մի տեսակ գրադաւունքից դէպի միւսը անցնելու համար չեն կարող բառացի կերպով կատարուի դասաւանց մէջ, սակայն ցանկալի էր Դ հարկաւոր դէպս ժամանակամիջոցը երկարել, որպէս զի աշակերտաց մեծագոյն մասը միակերպ յառաջ ընթանար։ Գործի յառաջադիմութեան համար անհրաժեշտ է, որ այն դասաւաներում, ուր վայելչագրութիւնը աւանդվում է երըև առանձին առարկայ, միւս առարկաների դասաւուները աշակերտա-

Ներից պահանջէին իրանց առարկաներին վերաբերեալ գրաւոր տշխատանքները այն գրութեան ձեռվ գրել ենչ կերպով որ նոքա ուսել էին վայելազգութեան ժամանակ:

Զ) Ի՞նչորին անու իրար էն և պիտի առնենոն աշխարհների գրելիք յօդուածները գրութեան դասերի ժամանակ: —

Սկզբում իրանց գասատեսրի յօդուածները, իսկ ապա նամականիք, պայմաններ, պարտամուրհակներ, հաշիւններ և այլն. այլք թելադրութեամբ կամ արտագրութեամբ կարող են գրել լեզուի գասագրքից առանձին յօդուածներ, որով մի կերպ կհետացնեն նաև լեզուի ուսուցչի գործը ուղղագրութեան մէջ:

Է) Ե՞ր պէտք է առաջնուն լուսանշանների գրութեանը: —

Պէտք է սկսել հենց գրութեան ուսուցման առաջն տարրուանից և շարունակել զուգընթացարար նորահետ:

Ը) Ի՞նչ պէտք է ոչի առաջ առնենու աշխարհներին գրութեանը լուսանշաններ նշանաբերի: —

Բացի գրութեան գեղեցկութիւնից՝ մեծ ուշք պէտք է գարձնել տետրակիների մաքրութեան վերայ, բայց որովհետեւ աշակերտները կարծես տետրակիների մաքրութիւնը պարտաւորական համարում են առ հասարակ վայելագրութեան գասերի ժամանակ, ուստի և ուսուցելը թուանշան գրելիս պէտք է կանխապէս հարցնէ ուսուցիչներից, թէ ինչպէս է պահում այս կամ այն աշակերտը իւր միւս տետրակիները:

Թ) Ի՞նչ Տիգրով իրելիք է իրափուռել աշխարհներին, որ նոքա աշխարհներ լու գրել:

Կարելի է կազմել գասարանական վիշտակարաններ, ուր իրաւունք տալ որեւէցէ մի յօդուած թէ ծանր

և թէ արագագրութեամբ գրելու այն աշակերտաց միայն, որք ըստ ամենայնի կրացնել կարող են կանոնաւոր և վայելուչ գրութիւնը որպիսի լիշտակարանները պահել դպրոցի գրատարանում: Աւ վերջապէս: —

Ժ) Անհրաժեշտ է արդեօք, որ վայելացրութեան ուսուցիչը բարեւուր լինի և լսու իւսու ուսուցույ: —

Անշուշտ կարեւոր է իւր հեղինակութիւնը աշակերտաց աչքում միշտ վեր պահելու համար, այլ և պէտք է անպատճառ ծանօթ լինի իւր առարկայի պատգութեանը և հետաքրքրուի նորանով յօդուած իւր առարկայի յառաջընթացութեան:

Վերջացնելով սոյն համառօտ տեսութիւնը, հարկաւոր ենք համարում յայտնել, որ ուսուցչաց և աշակերտաց գործը թեթևացնելու համար մենք մեր գասատերի ուղղութեանն համաձայն պատրաստել տուինք նաև տողուած միշտափ տետրակիներ այլ և այլ հասակիների համար, որք տարբերիլում են միմեանցից տողերի քանակութեամբ և լայնութեամբ՝ իւրաքանչյւը տեսակը իւր առանձին համարն ունենալով: Այս պէս օրինակ մենք հառատարակում ենք ընդամէնն և տեսակ տետրակիներ, նոցա ստորաբաժանումները ապագային թողնելով: Յիշեալ տետրակիները ունին հետեւեալ համարները, այն է: —

### № 1. ՓՈԳԲՈՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Առաջին տարի)

Զ օ ը ս տ ո դ.

## № 2. ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԹԱՆ ՀՅԱՋՐ

### (Առաջին վարժութիւն)

Երեք տող (առանց առաջնի)։

### № 3. ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՀՅԱՅՐ

### (Երկրորդ վարժութիւն)

Երեք տող (առանց վերջինի)։

#### № 4. ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

**B e k u m n q.**

Վերովիշեալներից № 4 տետրակը կարելի է գործածել և չօրբորդ տարրւան սկզբում, իսկ այնուհետեւ հարկաւորելիք մի տողով տետրակներ յախոնի է, որ շատ կան:

Եզրափակելով մեր խօսքը՝ տածում ենք յոյս, որ  
ներկայ տեսութեամբ և բացատրութեամբ փոքը ի  
շատէ պիտի նպաստած լինենք Վայելչագրութեան  
բարեւոք և յաջողակ դասաւանդութեանը մեր դպրոց-  
ներում ընդ ձեռն հայ ուսուցիչների, որոնց Դի սրտէ  
նուիբում ենք մեր այս չնչին աշխատութիւնը:

10 Յունիսի, 1884 թ.

## Աշէքսանդրապոլէ





## Գինն է 20 կոպէկ.

Սորա Հետ դուրս եկաւ մամուլի տակից Կենտրոնական գրավաճառանոցի հրատարակութեամբ.—

- 1) «ՀԱՅԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԵՐ» գասատեմը  
(Երկրորդ տպագրութիւն. — յբացըած և Հիմնական փոփոխութիւնների ենթարկած);
- 2) Տողուած տետրակներ աշակերտաց գործածութեան համար № 1, 2, 3 և 4-րդ. պատրաստուած յատկապէս ըստ մեր գասատեմի ուղղութեան,

Երկուքն էլ վաճառվում են Կենտրոնական գրավաճառանոցում:

Նոյն տեղը վաճառվում են և մեր Հետեւեալ աշխատութիւնները.—

- 1) «ՀԱՅԱԿԱՆ ԶԵՐԱՄԱՐԿ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ» (սակաւաթիւ)  
Գինն է 60 կ.
- 2) Դիստերվէգի «ՍԿԶԲՈՒՆՔ ԵՐԿՐԱՋԱԳՈՒԹԵԱՆ» Գինն  
է 40 կ.

20465

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0055409

